ՀՀ Լոռու մարզպետ

Արամ Խաչատրյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Խաչատրյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ «Ալիք Մեդիա»-ին տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին.

1. 2023 թվականին (այս ուսումնական տարեսկզբին) Լոռու մարզի համայնքների դպրոցներում (մարզպետարանի ենթակայության տակ գտնվող) քանի՞ առաջին դասարանցի է ընդունվել: Մարզում գտնվող դպրոցներից քանի՞սը մարզպետարանի ենթակայության տակ չեն, որո՞նք են:

2. Կա՞ն դպրոցներ, որտեղ աշակերտ չի ընդունվել, որո՞նք են:

3. Խնդրում եմ տրամադրել մարզի այն դպրոցների ցանկը, որտեղ ընդունվել է մինչև տասն առաջին դասարանցի՝ առանձնացնելով յուրաքանչյուր դպրոցի տվյալը:

4. 2023-ին մարզում քանի՞ աշակերտ է ավարտել միջնակարգ դպրոցը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

«Ալիք Մեդիա Հայաստան» լրատվական-վերլուծական կայքի լրագրող
Մարիամ Սարգսյան

(հեռ. 077556232, էլ.փոստ mariamsjournalist@gmail.com) 01.09.2023 թ.
Խմբագրության հասցե՝ ք. Երևան, Կորյունի 6